3.12.2020
346-72

ՀՀ ոստիկանության պետ, գնդապետ
պարոն Վահե Ղազարյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Ղազարյան,

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. ՀՀ-ում 2020 թվականի սեպտեմբերի 27-ից հայտարարված ռազմական դրության պայմաններում խոսքի ազատության սահմանափակումների խախտման հիմքով տուգանված 13 լրատվական գործունեություն իրականացնողներից քանի՞սն են բողոքարկել տուգանքի նշանակման մասին որոշումը:
2. Տուգանված 13 լրատվական գործունեություն իրականացնողներից քանի՞սն են տուգանվել 09.11.2020 թ.–ից հետո ընկած ժամանակահատվածում:
3. Արդյո՞ք լրատվական գործունեություն իրականացնողները տուգանվել են անգամ այն դեպքում, եթե համապատասխան պահանջից հետո անմիջապես հեռացրել են վիճարկվող նյութը կամ գրառումը:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Ուշադրություն: Խնդրում ենք հարցմանը պատասխանել բացառապես ***էլեկտրոնային եղանակով:***

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան

Ինֆորմացիայի ազատության կենտրոն (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ
Հեռ.՝ (+37410) 560360 +37491407836
Էլ. հասցե՝ foi@foi.am Կայք՝ www.foi.am